ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ո՞ր օկտավաներն են շրջապատում փոքր օկտավան.**

1) մեծ և կոնտր օկտավաները
2) կոնտր և սուբկոնտր օկտավաները
3) առաջին և երկրորդ օկտավաները
4) մեծ և առաջին օկտավաները

2 **Որո՞նք են նոտագրությունը կրճատող և պարզեցնող նշանները.**

1) տրեմոլո, ռեպրիզա
2) էքսպոզիցիա, ռեպրիզա
3) արպեջատո, ստակկատո
4) վոլտա, կոդա

3 **Ինչպե՞ս է կոչվում հնչման աստիճանաբար մեղմացումը երաժշտության մեջ.**

1) պիանիսիմո
2) սֆորցանդո
3) կրեշչենդո
4) դիմինուենդո

4 **Ինտերվալներն ունեն երկու մեծություն.**

1) հիմնական և լրացուցիչ
2) հիմնական և օժանդակ
3) աստիճանային և տոնային
4) բացարձակ և հարաբերական

5 **Ո՞ր շարքում է թվարկված ինտերվալների ճիշտ հաջորդականությունը.**

1) կվարտա, սեպտիմա, օկտավա
2) սեկունդա, տերցիա, կվինտա
3) կվինտա, սեքստա, սեպտիմա
4) պրիմա, տերցիա, կվարտա

6 **Մաժորի և մինորի զույգ տոնայնությունները լինում են.**

1) դիատոնիկ, էնհարմոնիկ հավասար, խրոմատիկ
2) զուգահեռ, ազգակից, համանուն
3) համանուն, դիատոնիկ, խրոմատիկ
4) զուգահեռ, համանուն, էնհարմոնիկ հավասար

7 **Համանուն տոնյանություններն ունեն**

1) միևնույն տոնիկաներ, միևնույն հնչյունաշարեր, տարբեր կառուցվածքներ
2) միևնույն տոնիկաներ, բանալու տարբեր նշաններ, տարբեր հնչյունաշարեր
3) բանալու միևնույն նշաններ, տարբեր տոնիկաներ, տարբեր հնչյունաշարեր
4) միևնույն հնչողություն, տարբեր գրություն և տարբեր նշանակություն

8 **Տոնայնական փոխհարաբերությունների տեսակներն են.**

1) շեղում, մոդուլյացիա (զարտուղում), համադրում
2) մոդուլյացիա (զարտուղում), շեղում, հակադրում
3) շեղում, մոդուլյացիա (զարտուղում), տրանսպոզիցիա
4) համադրում, հակադրում, փոխադրում

9 **Ինտերվալ /intervallum/ թարգմանաբար նշանակում է**

1) զուգակցություն
2) բարձրություն
3) փոխհարաբերություն
4) տարածություն

10 **Մաժորում տոնիկական եռահնչյունն ունի հետևյալ կառուցվածքը.**

1) մ.3 + փ.3
2) փ.3 +մ.3
3) մ.3 +մծց.3
4) մ.3 +մ.3

11 **Հարմոնիկ մինորում ...**

1) վերընթաց շարժման ժամանակ 7-րդ աստիճանը բարձրանում է կես տոնով, վարընթաց շարժման ժամանակ՝ իջնում
2) վերընթաց և վարընթաց շարժման ժամանակ 6-րդ աստիճանը բարձրանում է կես տոնով
3) վերընթաց շարժման ժամանակ 6-րդ և 7-րդ աստիճանները բարձրանում են կես տոնով, վարընթաց շարժման ժամանակ՝ իջնում
4) վերընթաց և վարընթաց շարժման ժամանակ 7-րդ աստիճանը բարձրանում է կես տոնով

12 **Ինչպե՞ս գրառել հնչյունի տևողությունը, եթե այն տևում է քառորդ + ութերորդական.**

1) երկու քառորդ կետով
2) քառորդ պաուզայով
3) քառորդ կետով
4) կես նոտա

13 **Դասական ֆուգաները սովորաբար ունեն**

1) երկմաս կառուցվածք
2) միամաս կառուցվածք
3) քառամաս կառուցվածք
4) երկմաս կամ եռամաս կառուցվածք

14 **Ո՞ր ձայնաստիճանը ցույց տվող ձեռքի նշանն է ցուցադրված տվյալ նկարում.**

1) սո
2) դո
3) լա
4) սի

15 **Երաժշտական ո՞ր ձևն է հիմնվում երկու հակադիր կերպարային ոլորտների վրա.**

1) ռոնդո-սոնատային ձև
2) ռոնդո ձև
3) վարիացիոն ձև
4) սոնատային ձև

16 **Այն չափերը, որոնք առաջանում են միանման պարզ չափերից, կոչվում են**

1) մեջընդմիջվող չափեր
2) բարդ խառը չափեր
3) փոփոխական չափեր
4) բարդ չափեր

17 **Պարզ երկմաս ձևը լինում է**

1) մոնոթեմատիկ և բազմաթեմատիկ
2) ռեպրիզայով և առանց ռեպրիզայի
3) միատոնայնական և զարտուղող
4) նորմատիվ և ոչ նորմատիվ

18 **Հայկական ժողովրդական երգարվեստում ինչպե՞ս է կոչվում մեծացրած սեկունդայով ձայնակարգը (լադը).**

1) հարմոնիկ կամ երկակի
2) միքսոլիդիական
3) էոլական
4) դորիական

19 **Նշել ճիշտ տողը, որտեղ առկա են հայկական ժողովրդական երգերին բնորոշ օժանդակ հենակետերը.**

1) սեկունդային, կվարտային, սեպտիմային
2) տերցիային, կվարտային, կվինտային
3) տերցիային, կվինտային, սեքստային
4) կվարտային, սեքստային, սեպտիմային

20 **Միքսոլիդիական մաժորը ո՞ր ձայնաստիճանով է տարբերվում բնական մաժորից.**

1) ցած երկրորդ
2) բարձր չորրորդ
3) բարձր վեցերորդ
4) ցած յոթերորդ

21 **Ինչո՞վ պայմանավորված չէ ժողովրդական երգարվեստում երաժշտական լեզվի ինքնատիպությունը.**

1) ժողովրդի կենցաղով և պատմական իրադարձություններով
2) ազգային երաժշտական լեզվամտածողությամբ
3) ժողովրդի աշխարհայացքով
4) այլազգի երաժշտության ազդեցությամբ

22 **Նշված երգերից ո՞րն է հեղինակել Կոմիտաս վարդապետը.**

1) Խնկի ծառ
2) Գարուն ա
3) Կանչե կռունկ
4) Կաքավի երգը

23 **Նշված ձայնակարգերից (լադերից) ո՞րը մաժոր չէ.**

1) լիդիական
2) էոլական
3) իոնական
4) միքսոլիդիական

24 **Ի՞նչ է վանկի եղանակավորումը ժողովրդական երգերում.**

1) հնչման մեղմացումը վանկի արտաբերման ժամանակ
2) վանկի կտրուկ արտաբերում
3) վանկի անշտապ, ծոր տալով արտաբերում
4) հնչման ուժգնացումը վանկի արտաբերման ժամանակ

25 **Նշվածներից ո՞րն է երաժշտական իմաստային և կառուցվածքային ամենափոքր միավորը.**

1) պարբերություն
2) ֆրազ
3) մոտիվ
4) նախադասություն

26 **Նշել ճիշտ տողը, որտեղ նշվածը մոտիվ չէ.**

1) ինտոնացիա (ձայնելևէջ)
2) յամբ
3) քորեյ
4) ամֆիբրախիական

27 **Նշվածներից ո՞րը չափակշռութային (մետրառիթմական) միավոր չէ.**

1) հետշեշտ կամ թույլ վերջավորություն
2) շեշտ
3) նախաշեշտ
4) մոտիվ

28 **Ո՞վ է հայկական ազգային բալետի հիմնադիրը.**

1) Տիգրան Չուխաճյան
2) Ալեքսանդր Սպենդիարյան
3) Արմեն Տիգրանյան
4) Արամ Խաչատրյան

29 **Ո՞վ է հայկական ազգային սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը.**

1) Տիգրան Չուխաճյան
2) Ալեքսանդր Սպենդիարյան
3) Արմեն Տիգրանյան
4) Արամ Խաչատրյան

30 **Նշված բալետներից ո՞րն է ստեղծել կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը.**

1) «Հավերժական կուռք»
2) «Չոփչոփիկը»
3) «Ձյունե թագուհին»
4) «Քնած գեղեցկուհին»

31 **Ո՞վ է Հայաստանում առաջին սիմֆոնիկ նվագախմբի ստեղծողը.**

1) Հարո Ստեփանյան
2) Արամ Խաչատրյան
3) Տիգրան Չուխաճյան
4) Ալեքսանդր Սպենդիարյան

32 **Նշված երգերից ո՞րը Սայաթ-Նովայի երգը չէ.**

1) «Արի՛ ինձ անգաճ կալ, ա՛յ դիվանա սիրտ»
2) «Դուն էն գլխեն»
3) «Ես մեկ ծառ եմ ծիրանի»
4) «Քամանչա»

33 **Նշված երգերից ո՞րը ժողովրդական երգ չէ.**

1) «Անձրևն եկավ»
2) «Քելե, քելե»
3) «Հաբրբան»
4) «Հարի հարալո»

34 **Ո՞ր տողի բոլոր երգերն են Ռոբերտ Պետրոսյանինը.**

1) «Հայաստան», «Ուղիղ կարգով», «Իմ ուսուցիչ», «Աստղիկների երգը»
2) «Իմ ուսուցիչ», «Աշուն», «Ջա՜ն հայրենիք», «Անձրևի երգը»
3) «Խուտուտ-մուտուտ», «Երգ մայրիկիս», «Նոր տարվա երգ-պար», «Նապաստակի երգը»
4) «Արջամուկը», «Ջանգն առաջին», «Հայաստան», «Հովիվ»

35 **Ո՞վ է հայկական ազգային առաջին օպերայի հեղինակը.**

1) Տիգրան Չուխաճյան
2) Արամ Խաչատրյան
3) Ալեքսանդր Սպենդիարյան
4) Արմեն Տիգրանյան

36 **Ո՞վ է հայկական առաջին ազգային դասական օպերայի հեղինակը.**

1) Հարո Ստեփանյան
2) Արմեն Տիգրանյան
3) Ալեքսանդր Սպենդիարյան
4) Գևորգ Արմենյան

37 **Նշվածներից ո՞րն է հայկական առաջին օպերան.**

1) Ա. Տիգրանյանի «Դավիթ-Բեկ»
2) Ա. Տիգրանյանի «Անուշ»
3) Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»
4) Տ. Չուխաճյանի «Արշակ Բ»

38 **Նշված երաժշտաթատերական երկերից ո՞րն է բալետը.**

1) «Խորտակում»
2) «Անուրջների լիճը»
3) «Դավիթ Բեկ»
4) «Լեբլեբիջի Հոր-հոր աղա»

39 **Նշված երաժշտաթատերական երկերից ո՞րն է Կոմիտաս վարդապետի անավարտ օպերան.**

1) «Խաչատուր Աբովյան»
2) «Դավիթ Բեկ»
3) «Անուշ»
4) «Գայանե»

40 Նշել Վիեննական դասական դպրոցի ամենաավագ կոմպոզիտորին.

1) Յ. Ս. Բախ
2) Գ. Ֆ. Հենդել
3) Լ. վան Բեթհովեն
4) Յ. Հայդն

41 Ո՞ր կոմպոզիտորն է կիրառել ձայնը և երգչախումբը սիմֆոնիայում.

1) Յ. Ս Բախ
2) Պ. Չայկովսկի
3) Ջ. Ռոսինի
4) Լ. վան Բեթհովեն

42 Բեթհովենի երկը, որի հիմքում ընկած է մարդկությանն ուղղված եղբայրության ու միասնության կոչը.

1) սիմֆոնիա թ. 3
2) սիմֆոնիա թ. 6
3) սիմֆոնիա թ. 9
4) սիմֆոնիա թ. 5

43 Սիմֆոնիա բառը հունարենից թարգմանաբար նշանակում է

1) համաձայնություն
2) համադրություն
3) համահնչունություն
4) համաձույլ

44 Ին՞չ գործիքի համար է գրված Յ. Ս. Բախի Տոկկատ և ֆուգա (ռե-մինոր) ստեղծագործությունը.

1) ֆիսհարմոն
2) կլավեսին
3) դաշնամուր
4) երգեհոն

45 **Ո՞ր նվագարանն է բնութագրում Պապիկին Պրոկոֆևի «Պետյան և գայլը» սիմֆոնիկ հեքիաթում.**

1) կլառնետ
2) ֆագոտ
3) շեփոր
4) թավջութակ

46 **Եվրոպայում ո՞ր դարում է ստեղծվել ու զարգացել կոնցերտի ժանրը.**

1) XV - XVIդդ
2) XVIII – XIX դդ
3) XVII - XVIIIդդ
4) XVI - XVIIդդ

47 **Նշել կոմպոզիտորին, ով գրել է շուրջ 500 կոնցերտ.**

1) Յ. Հայդն
2) Լ. Բեթհովեն
3) Ա. Վիվալդի
4) Վ. Ա. Մոցարտ

48 **Նշել «Կախարդական սրինգ» օպերայի գործող անձանց.**

1) Էբալ, Մելիա, Զեֆիր
2) Պամինա, Տամինո, Զարաստրո
3) Կերուբինո, Բարտոլո, Ռոզինա
4) Կոմամդոր, Լեպորելո, Ցերլինա

49 **Ինչպե՞ս է Բեթհովենը անվանել իր թ. 14 սոնատը.**

1) լույսի սոնատ
2) սոնատ-էպիտաֆիա
3) սոնատ-ֆանտազիա
4) լուսնի սոնատ

50 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.



1) Սվիրիդով «Ռոմանս»
2) Ֆ. Լիստ «Հունգարական ռապսոդիա»
3) Է. Գրիգ «Նորվեգական պար»
4) Յ. Վ. Բրամս «Հունգարական պար»

51 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.



1) Ֆ. Շոպեն «Վալս»
2) Ֆ. Շուբերտ «Երաժշտական ակնթարթ»
3) Վ. Մոցարտ «Օրորոցային»
4) Է. Գրիգ «Առավոտ»

52 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.



1) Ֆ. Շուբերտ «Երաժշտական ակնթարթ»
2) Վ. Մոցարտ «Dies irae»
3) Է. Գրիգ «Օգեի մահը»
4) Ֆ. Շոպեն Մազուրկա

53 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.



1) Յ. Շտրաուս «Գարնանային ձայներ»
2) Ա. Այվազյան «Հայկական ռապսոդիա»
3) Տ. Մանսուրյան Մենուետ «Զյունե թագուհի» բալետից
4) Վ. Մոցարտ «Լակրիմոզա»

54 **Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.**



1) Վ. Մոցարտ «Մենուետ»
2) Ֆ. Լիստ «Հունգարական ռապսոդիա»
3) Է. Գրիգ «Նորվեգական պար»
4) Յ. Վ. Բրամս «Հունգարական պար»

55 **Նշված երաժշտաթատերական երկերից ո՞ր երկուսը օպերաներ չեն.**

1) «Սևան»
2) «Արշակ Բ»
3) «Ալմաստ»
4) «Անտունի»
5) «Խաչատուր Աբովյան»

56 **Նշված երաժշտաթատերական երկերից ո՞ր երկուսը բալետներ չեն.**

1) «Սայաթ-Նովա»
2) «Անուրջների լիճը»
3) «Հերոսուհին»
4) «Երջանկություն»
5) «Հավերժական կուռք»

57 **Նշված եզրույթներից ո՞ր երկուսը երաժշտության արտահայտչամիջոցներ չեն.**

1) ֆրազ
2) ռիթմ
3) տեմպ
4) մոտիվ
5) հնչողության ուժգնություն (դինամիկա)

58 **Նշել երկու տարբերակները, որտեղ կառուցված են միայն մաքուր կվարտա ինտերվալներ դեպի վեր.**

1) սի բեմոլ - մի բեմոլ, դո դիեզ - ֆա դիեզ, ֆա - սի բեմոլ
2) ռե - սոլ բեմոլ, սի բեմոլ - մի բեմոլ, ֆա - սի բեմոլ
3) սի - մի, ռե բեմոլ - սոլ, դո - ֆա
4) լա - ռե, մի բեմոլ – լա բեմոլ, ֆա դիեզ - սի
5) ռե - սոլ, մի – լա բեմոլ, լա - ռե

59 **Նշել երկու տարբերակները, որտեղ թվարկված են միայն չափավոր տեմպերը.**

1) Moderato, Allegro, Sostenuto
2) Andante, Moderato, Allegretto
3) Andantino, Sostenuto, Allegro
4) Sostenuto, Allegretto, Andantino
5) Andantino, Allegro, Allegretto

60 **Նշվածներից ո՞ր երկու շարքերում են ներկայացված միայն մելիզմները /զարդահնչյունները/.**

1) գրուպետո, մորդենտ, տրել
2) ֆորշլագ, տրեմոլո, մորդենտ
3) գրուպետո, արպեջիատո, տրիոլ
4) մորդենտ, ֆորշլագ, տրել
5) տրեմոլո, արպեջիո, ֆիգուրացիա

61 **Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու ճիշտ տարբերակները.**

1) փ.3 + փ.3 = փքց.5
2) մաք.5 + մաք.4 = մաք.8
3) մ.3 +մ.3 = մաք.5
4) մ.2 + փքց.5 = մ.6
5) փ.6 + մաք.1 = փ.7

62 **Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու սխալ տարբերակները.**

1) փ.6 – փ.3 = մաք.4
2) մաք.8 – մ.3 = փ.6
3) մծց.5 – մծց.2 = մ.3
4) մ.7 - մ.6 = մ.2
5) փքց.5- մծց.4 = մ.2

63 **Նշել երկու ճիշտ պատասխանները.**

1

2



3

4

5

1) Կամիլ Սեն-Սանս
2) Ֆելիքս Մենդելսոն
3) Արտուրո Տոսկանինի
4) Լեո Դելիբ
5) Նիկոլայ Ռիմսկի-Կորսակով

64 Նշել երկու սխալ պատասխանները.

1

2

3

4

5

1) Կոմիտասի թանգարան-ինստիտուտ
2) Կամերային երաժշտության տուն
3) «Առնո Բաբաջանյան» համերգասրահ
4) «Արամ Խաչատրյան» համերգասրահ
5) Սպենդիարյանի անվ. օպերային թատրոն

65 Նշել ռոմանտիզմին պատկանող երկու կոմպոզիտորներին.

1) Ջ. Գերշվին
2) Ա. Վիվալդի
3) Ֆ. Շոպեն
4) Վ. Մոցարտ
5) Ֆ. Մենդելսոն

66 **Համապատասխանեցնել օպերաները հեղինակներին.**

Ա) «Արշակ Բ»
Բ) «Եվգենի Օնեգին»
Գ) «Ձյունանուշ»
Դ) «Դավիթ Բեկ»

1) Ա. Տիգրանյան
2) Ֆ. Շոպեն
3) Ն. Ռիմսկի-Կորսակով
4) Տ. Չուխաճյան
5) Յ. Ս. Բախ
6) Պ. Չայկովսկի

Ա	Բ	Գ	Դ

67 **Համապատասխանեցնել երաժշտական տերմիններն իրենց սահմանումներին.**

Ա) պարբերություն
Բ) մոտիվ
Գ) կադանս
Դ) ցեզուրա

1) համեմատաբար ավարտուն երաժշտական միտք պարունակող ամենափոքր կառույցը:
2) երաժշտական մտքի կառուցվածքի փոքրագույն մասնիկը, որը պարունակում է մեկ շեշտ,
3) մի շեշտից մյուսն ընկած հատվածը,
4) պարբերության բաղկացուցիչ մաս,
5) երաժշտական մտքի հարմոնիկ եզրափակում,
6) երաժշտական մտքի շարադրման ընթացքում առանձին իմաստ պարունակող կից կառույցների բաժանման պահը,

Ա	Բ	Գ	Դ

68 **Համապատասխանեցնել երաժշտական ստեղծագործությունները հեղինակած կոմպոզիտորներին.**

Ա) «Գարնանային ձայներ» վալս
Բ) «Ռապսոդիա բլյուզի ոճով»
Գ) «Զյունանուշ» օպերա
Դ) «Մոխրոտը» բալետ

1) Ն. Ռիմսկի-Կորսակով
2) Պ. Չայկովսկի
3) Յ. Շտրաուս-հայր
4) Յ. Շտրաուս-որդի
5) Ս. Պրոկոֆև
6) Ջ. Գերշվին

Ա	Բ	Գ	Դ

69 **Համապատասխանեցնել գրական ստեղծագործությունները հեղինակներին.**

Ա) «Զոն Ուրախության»
Բ) «Դիմակահանդես»
Գ) «Քնած գեղեցկուհի»
Դ) «Ռուսլան և Լյուդմիլա»

1) Լ. Ռելշտաբ
2) Մ. Լերմոնտով
3) Ա. Պուշկին
4) Վ. Մուլլեր
5) Շ. Պերո
6) Ֆ. Շիլեր

Ա	Բ	Գ	Դ

70 **Համապատասխանեցնել օպերաները հեղինակներին.**

Ա) «Դոն Ժուան»
Բ) «Ոսկե աքաղաղը»
Գ) «Ինդիանա»
Դ) «Անուշ»

1) Ա. Տիգրանյան
2) Տ. Չուխաճյան
3) Ժ. Բիզե
4) Ն. Ռիմսկի-Կորսակով
5) Վ. Մոցարտ
6) Ն. Տիգրանյան

Ա	Բ	Գ	Դ

71 **Համապատասխանեցնել սիմֆոնիաները հեղինակած կոմպոզիտորներին.**

Ա) «Պատանեկան»
Բ) Քառասուներորդ սիմֆոնիա
Գ) Հինգերորդ սիմֆոնիան, որի թեմայի մասին հեղինակը ասել է. «Այսպես է ճակատագիրը բախում դուռը»
Դ) «Զանգով սիմֆոնիա»

1) Ֆ. Մենդելսոն
2) Վ. Մոցարտ
3) Է. Միհրանյան
4) Պ. Չայկովսկի
5) Լ. Բեթհովեն
6) Ա. Խաչատրյան

Ա	Բ	Գ	Դ

72 **Համապատասխանեցնել կոմպոզիտորները՝ ազգություններին.**

Ա) Գ. Հենդել
Բ) Ֆ. Շոպեն
Գ) Յ. Շտրաուս
Դ) Է. Գրիգ

1) իտալացի
2) գերմանացի
3) հունգարացի
4) լեհ
5) ավստրիացի
6) նորվեգացի

Ա	Բ	Գ	Դ